# ԽԱՆԼԱՐԻ ՇՐՋԱՆ

## 85. ՍԱՐՈՎ ԳՅՈՒՂ

***821. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ** վրա, որը գտնվում է գերեզմանատանը.*

Տապանս Մէլիքին. :ՌՃԻԲ: Էր (1673):

*Հրատ. Բարխուդարեանց, 33։*

## 86. ՄՌՈՒՏ ԳՅՈՒՂ

*Այս գյուղն իր ներկա տեղում հաստատվել է վերջին դարերում, իսկ եկեղեցին շինվել է 1881 թվականին։ Հնում այն եղել է ավելի բարձր տեղում, դեպի Հաջիքենդ տանող անտառամիջի ճանապարհի վրա։ Այժմ այդ հին գյուղատեղի ընդարձակ ավերակները մեծ մասամբ ծածկված են ծառերով և թփերով. գյուղատեղին կոչվում է «Բլուշք» (ապարանք-դղյակ)։ Գյուղատեղում մնացել են փոքր եկեղեցու հիմնապատերը (որը Ջալալյանցի ժամանակ կանգուն է եղել՝ 1841 թ. առաջ) և ցաք ու ցրիվ խաչքարեր։ Ջալալյանցի ասելով հուշարձանի ներսում գտնվող խաչքարի մասին ավանդություն է եղել, որ այն օծել է Մեսրոպ Մաշտոցը, որի պատճառով էլ կոչվում է Մեռոնոտ կամ Մռուտ։ Գանձակի ս. Հովհաննես եկեղեցու մեջ թաղված է Մռուտ անապատի առաջնորդ Հարություն վարդապետը, 1800 թ. գ (արձ. № 815)։*

***822. ԽԱՉՔԱՐ,** գեղաքանդակ, գտնվում է գյուղատեղից մոտ մեկ կիլոմետր հարավ-արևմուտք, բացատի մեջ. խաչքարն ընկած է և նրա մոտ պատվանդան չկա. ստորին մասում տողերի մեջ 5 տող.*



ԹԻՒ. :ՌԼԳ: ԵՍ ՊԱՒՂՈՍ Ե[Ր]Ի
Ս[Ր]ԱՀԱԿ ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԽԱԶՍ| Ի
ԲԱՐԷԽԱՒՍՈՒԹԻՒՆ. ՀԱՒՐԵՂԲԱՐ
Մ|ԵՐՈ ԲԱՐՍՂԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՒ
ՀԱՒՐ ՄԵՐ[Ո] Ա|ԿՈԲԱ. ՈՐՔ ԵՐ-
[ԿՐ]ՊԱԳԷՔ ՒՇԵՑԷՔ Ի [ՔՍ].
ԱՂԱՉԵՄ[Ք]: